Արձանագրություն N 3

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **6.12.2017թ.**
Ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ներսիսյան, Մ. Կլեկչյան, Ս. Սահակյան,Ե.Մաթևոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Ղավալյան

1. Տեղեկություններ «ԵՔ- ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների միջև բանակցությունների անցկացման մասին

(Գ. Մարտիրոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ **«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/5»** ծածկագրով ընթացակարգի բանակցություններին ծանուցված մասնակիցը չի ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Գ. Մարտիրոսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լենտեքս» ՍՊԸ–ն, իսկ 12-րդ չափաբաժնի մասով՝ «Միսմա» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցների անվանումները		
			«Լենտեքս» ՍՊԸ		«Միսմա» ՍՊԸ
			առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ-ն	առանց ԱԱՀ
4	Անկողնային պարագա (ծրար, սավան, բարձի երես)	945000	-	-	1170000
7	Գլխարկ	270000	116666	140000	-
8	Գուլպա	210000	145833	175000	-
12	Նորածնի անկողնային պարագաներ /կոմպլեկտ/	276000	-	-	240000
13	Սեղանի սփռոց և սեղանի դասավորման անձեռոցիկներ /հավաքածու /	914000	-	-	1800000

2.2 4-րդ և 13-րդ չափաբաժինների մասով «Միսմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են մեր կողմից սահմանված նախահաշվային գները, և քանի որ մասնակիցը չի ներկայացել գների նվազեցման բանակցությունների, հանձնաժողովը որոշեց այդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 6.**12.2017թ.** հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ armeps համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ուղարկել ծանուցում՝ առա

ջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը (Հրավերի հավելված 6.1):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Մարտիրոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված հարցման և մասնակցի առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Նախագահ՝		Գ. Մարտիրոսյան
Անդամներ՝		Ս. Ներսիսյան
		Մ. Կլեկչյան
		Ս. Սահակյան
		Ե.Մաթևոսյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան